ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15-2

ք. Երևան «5» 08 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մարի Հրատարակչություն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 16904400 (տասնվեց միլիոն ինը հարյուր չորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) ակնկալները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2 հավելվածները**, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	<<Մարի Հրատարակչություն>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	Ք. Երևան, Ն. Ստեփանյան փ. 9շ., 47բն.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Այ Դի բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011022622	Հ/Հ 11807018681200
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00882175
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Ն. Հարությունյան	---------- Մ. Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«05» 08 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը*
2	22111120/12	Գրադարանի գրքեր-2, «Հետաքրքրաշարժ երկրաչափություն»	<<Մարի Հրատարակչություն>> ՍՊԸ, ՀՀ	**Նախատեսվում է ձեռք բերել «Հետաքրքրաշարժ երկրաչափություն» գիրքը, որը բովանդակությամբ պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.** Առաջարկվող ուսումնական ձեռնարկը նպատակ պետք է ունենա. • լրացնել և հարստացնել սովորողների գիտելիքները երկրաչափություն առարկայից, • ձևավորել հետաքրքրություն երկրաչափության, երկրաչափական գիտելիքները կյանքի տարբեր իրավիճակներում կիրառելու կարողություն, • նպաստել երկրաչափություն առարկայից ձեռք բերած գիտելիքների կիրառմանը անհրաժեշտ թվացող իրավիճակներում, • զարգացնել սովորողների փորձարարական, արագ հաշվելու, մտածելու, տրամաբանելու կարողությունները, խնդիրները, առաջադրանքներն արագ ու ճշգրիտ լուծելու կարողությունները, անհավանական ու անհնարին թվացող չափումներ իրականացնելու կարողությունը, • նպաստել լսողական և տեսողական հիշողության, վերլուծական ու ճկուն մտածողության, կենտրոնացման, տրամաբանության, ստեղծագործական մտքի, ճանաչողական ակտիվության զարգացմանը, • ձևավորել տեղեկությունը ստանալու, պահպանելու, մշակելու, կիրառելու ու փոխանցելու հմտություններ,	հատ	1400	4144,285	5802000	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը

				• մեթոդական տարբեր ցուցումներով, նյութերով, հետաքրքրաշարժ պատմություններով ու օրինակներով օգնի մասնագետներին առարկան, նյութը երեխաներին ավելի հասկանալի մատուցել: Ուսումնական նյութի շարադրանքը պետք է լինի մատչելի, հետաքրքրաշարժ, խթանի երկրաչափության հանդեպ սովորողների հետաքրքրությունն ու գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Ձեռնարկը պետք է ներառի. 1. Սովորողների համար հետաքրքրաշարժ, բայց ճշգրիտ, այլընտրանքայի մեթոդներով երկրաչափական չափումներ սովորեցնող մեթոդներ ու նյութեր: 2. Ձեռնարկում պետք է լինեն նյութեր, որոնք կօգնեն սովորողներին մարզել տրամաբանությունը, մտածողությունը, արագ և ոչ ստանդարտ եղանակներով կատարել հաշվարկներ ու չափումներ: 3. Ձեռնարկում պետք է առաջարկվեն անհավանական, անհասանելի չափումներ կատարելու հստակ մեթոդներ ու եղանակներ: 4. Նյութերը պետք է սովորեցնեն առանց բանաձևերի, աղյուսակների կիրառման կատարել անհրաժեշտ, երբեմն անհնարին թվացող հաշվարկներ: 5. Նյութերում պետք է հետաքրքրաշարժ կապ ստեղծվի երկրաչափության ու մեզ շրջապատող աշխարհի, տիեզերքի, բնության, առօրյա կյանքի իրերի ու երևույթների հետ: 6. Պատմություններ, որոնցում արտացոլված կլինեն երկրաչափական հետաքրքրաշարժ լուծումներ: 7. Ձեռնարկում պետք է առաջադրվեն տարբեր խնդիրների լուծման օրինակներ, որոնք կլինեն դասագրքային նյութի սահմաններից դուրս:					
3	22111120/13	Գրադարանի գրքեր-3, «Հետաքրքրաշարժ բնագիտություն»	<<Մարի Հրատարակչություն>> ՍՊԸ, ՀՀ	**Նախատեսվում է ձեռք բերել «Հետաքրքրաշարժ բնագիտություն» գիրքը, որը բովանդակությամբ պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.** 1. Ուսումնական նյութի բովանդակությունը պետք է համապատասխանի միջին դպրոցում ուսումնասիրվող բնագիտական առարկաների ծրագրային նյութին: 2. Շարադրանքը պետք է լինի մատչելի, հետաքրքրաշարժ, խթանի բնության հանդեպ սովորողների հետաքրքրությունը, գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: **Ձեռնարկը պետք է ներառի.** 3. Հետաքրքրաշարժ հարցեր, որակական և հաշվարկային խնդիրներ: Ի տարբերություն դասագրքերում և խնդրագրքերում բերվող ստանդարտ, իդեալականացված խնդիրների՝ այստեղ	հատ	1400	3786	5300400	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը

				պետք է ընդգրկվեն իրական աշխարհին անմիջականորեն առնչվող հարցեր, խնդիրներ, որոնց լուծումը շատ դեպքերում կպահանջի դիտարկվող երևույթի մոդելի, անհրաժեշտ տվյալների ընտրություն, թվային արժեքների գնահատում: Այլ խոսքով, այն պետք է նմանվի փոքրիկ գիտական հետազոտության: Որպես կանոն, դրանցից յուրաքանչյուրի լուծումը կպանաջի գիտելիքներ մի քանի բնագիտական առարկերից: 4. Ձեռնարկում պետք է դիտարկվեն բնական երևույթներին վերաբերող տարբեր պարադոքսներ: Դրանց վերլուծությունը հնարավորություն կընձեռի սովորողների մեջ ձևավորելու երևույթները տարբեր տեսանկյուններից դիտարկելու, դրանք առավել խորությամբ ըմբռնելու, հնարավոր տրամաբանական սխալներից խուսափելու կարողություններ: 5. Հետաքրքրաշարժ պատմություններ, որտեղ կներկայացվեն բնական երևույթների, անվանի գիտնականների, նրանց հայտնագործությունների մասին հետաքրքիր, ուսանելի պատմություններ: 6. Հետաքրքրաշարժ փորձեր, որտեղ կներկայացվեն բնության տարբեր երևույթները ցուցադրող, լուսաբանող փորձեր, որոնց իրականացումը չի պահանջում բարդ սարքավորումներ: **Գիրքը պետք է նպաստի** • բնագիտական առարկաներից սովորողներին հաղորդվող դասագրային նյութի լրացմանն ու հարստացմանը, • բնության երևույթների, բնագիտական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների, ճանաչողական որակների ձևավորմանը, • առօրյա կյանքում, շրջապատում հանդիպող երևույթները բացատրելու, գործնական խնդիրներ լուծելու կարողությունների ձևավորմանը: • սովորողների փորձարարական հմտությունների ձևավորմանը, • բնագիտական առարկաների միջառարկայական կապերի ցուցադրմանը:					
6	22111120/16	Գրադարանի գրքեր-6, «Հանրամատչելի մաթեմատիկա»	<<Մարի Հրատարակչություն>> ՍՊԸ, ՀՀ	**Նախատեսվում է ձեռք բերել «Հանրամատչելի մաթեմատիկա» գիրքը, որը բովանդակությամբ պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.** Ձեռնարկը նախատեսված է հանրակրթական դպրոցների սովորողների և ուսուցիչների համար: Առաջարկվող ուսումնական ձեռնարկը նպատակ պետք է ունենա. • լրացնել և հարստացնել սովորողների գիտելիքները	հատ	1400	4144,285	5802000	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը

				մաթեմատիկա առարկայից, • ձևավորել հետաքրքրություն մաթեմատիկայի, բանավոր արագ հաշվելու մեթոդների նկատմամբ, • նպաստել մաթեմատիկա առարկայից ձեռք բերած գիտելիքների կիրառմանը կյանքում, առօրյայում, • զարգացնել սովորողների փորձարարական արագ հաշվելու, խնդիրները, առաջադրանքներն արագ ու ճշգրիտ լուծելու կարողություններ, մեծ թվերի հետ աշխատելու հմտություններ, **Ձեռնարկը պետք է ներառի.** 1. Ձեռնարկում պետք է առաջադրվեն մաթեմատիկական խնդիրների ու առաջադրանքների արագ լուծման մեթոդներ: Դրանց վերլուծությունը հնարավորություն կընձեռի սովորողների մեջ ձևավորելու արագ և առանց սարքերի մտածելու, տրամաբանելու, հիշելու կարողություններ: 2. Հետաքրքրաշարժ պատմություններ, որտեղ կներկայացվեն անվանի գիտնականների, նրանց հայտնագործությունների մասին հետաքրքիր և ուսանելի պատմություններ: 3. Ձեռնարկը պետք է ունենա թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն բաժիններն ու դրանց վերաբերյալ մեթոդական ցուցումներ, հետաքրքիր, դասագրքերին լրացնող տեղեկություններ: **Ներածություն** **1.Արագ հաշվարկ** Ունի ներածականմաս: Ներակայցվում են բանավոր հաշվելու մեթոդները, որոնք հանրավորություն են ստեղծում երեխաների համար բանավոր կերպով բազմապատկելու և բաժանելու երկնիշ և եռանիշ թվերը: **2.Տոկոսային խնդիրների լուծման մեթոդիկաներ:** Ունի ներածական մաս: Ներկայացվում են մեթոդիկաները սկսած պարզ խնդիրներից աստիճանաբար բարդացնելով խնդիրները: Ներակայցվում են խնդիրների ցանկ՝ ինքնուրույն լուծելու համար: **3.Հին և նոր թվագրությունների մասին** Ներկայացվում են հին եգիպտական, հին բաբելոնական, հռոմեական, հունական սլավոնական թվագրությունների համար օգտագործվող թվանշանները և համակարգերը: **Գիրքը ունի հավելվածներ:** Հավելված 1-ինում ներակայցվում են թվաբանության, հանրահաշվի և երկրաչափության հիմնական հասկացությունների սահմանումներն ու բաժանումները /հարց ու պատասխանների ձևով/:					

				Հավելված 2-րդում ներակայցվում են պատմական տեղություններ թվաբանության, հանրահաշվի և երկրաչափության վերաբերյալ:					

2-րդ, 3-րդ և 6-րդ չափաբաժինների համար

1. Տեխնիկական չափանիշներ.

Չափսը՝ 16.5 x 24,

Տեքստի թուղթը՝ 80 գր. օֆսեթ,

Տեքստի գույները՝ 4 + 4,

Էջերի քանակը՝ 140,

Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ,

Կազմի գույները՝ 4+0,

Կազմարարություն՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա:

2. Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7,4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

3.Հատուկ նշագրում՝ յուրաքանչյուր գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

4. Գրադարանի գրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

5. Գրադարանի գրքերի բաշխումը՝ Կատարողի կողմից համաձայն կից բաշխման ցուցակի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ НАУКИ КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
02598732

---------- Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Մ. Մելքոնյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հերթական համարը	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն	Ընդամենը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	15	17	
2	Գրադարանի գրքեր-2	120	110	120	120	120	120	120	120	110	90	100	150	1400	
3	Գրադարանի գրքեր-3	120	110	120	120	120	120	120	120	110	90	100	150	1400	
6	Գրադարանի գրքե-6	120	110	120	120	120	120	120	120	110	90	100	150	1400	

**Ծանոթություն.* Գրքերի բաշխումը կատարվում է հիմնական դպրոցների միջև:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

_____Մ. Մելքոնյան

«05» 08 **Հավելված N 2**
2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ենթակա են վճարման 2019թ պետական բյուջեի <<Գրադարանային ֆոնդի համալրում>> ծրագրի 5132 հոդվածից, ընդ որում.										Ընդամենը
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ			9 ամիս			Տարի			
			-	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբերի 20-ը	
2	22111120/12	Գրադարանի գրքեր-2						5802,0	5802,0	5802,0	5802,0	5802,0	5802,0
3	22111120/13	Գրադարանի գրքեր-3						5300,4	5300,4	5300,4	5300,4	5300,4	5300,4
6	22111120/16	Գրադարանի գրքեր-6						5802,0	5802,0	5802,0	5802,0	5802,0	5802,0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Մ. Մելքոնյան